

որիչ անտիպ աշխատութիւններ: Սոցա համաձայնութեամբ կարելի կլինի նաեւ ստուգել թէ արդեօք նորա այս թղթի իսկական հեղինակ լինե՞լ որեւէ կասկածի ենթարկուե՞մ է:

Կ. Վ.

ՀԱՄԻՍԼԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՆՈՐԱ ԱՆՄԱՏՁԵԼԻՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱԶԳՄԱՆՅ ՀԱՄԱՐ: *

Համիլամականութիւն ասելով հասկանում ենք մահմեդական ընդարձակ աշխարհին յատուկ միութեան գիտակցութիւնը: Ինչքան աւելի ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ այդ ամուր կապը կրօնական հիմքի վերայ է հաստատուած, նոյնքան աւելի աչքի է ընկնում և այն, որ նորա դէմ համաքրիստոնէականութիւն զնել կարելի չէ, կամ սահմանափակ մտքով միայն կարելի է: Յիրաւի մահմեդականութիւնը, շնայած իւր ահագին տարածականութեան (արեւելեան Ասիայից մինչև Սենեգա), շատ աւելի միապաղաղ տպաւորութիւն է գործում, քան բազմապատիկ կերպով բաժան բաժան եղած քրիստոնէութիւնը: Բոլորովին անիրաւացի է Շիա հերձուածը Սուննայի վարդապետութեան հետ համեմատելով իբրև ազատամիտ ուղղութիւն ներկայացնել: Իսկապէս Շիան քաղաքական մի կուսակցութիւն էր սկզբում, որ ձգտում էր խալիֆայութիւնը Մահմեդի մահից յետոյ նորա հօրեղբորդի և փեսայ Ալիին անցնել տալ: Իսկ այսօր շիաների և սուննիների մէջ եղած թշնամութեան հիմք կազմում է աւելի այն ազգային

հակառակութիւնը, որ բաժանում է պարսիկներին թուրքերից, կամ արաբներից, արեւելքում այդպիսի մի հակառակութիւն հետադարձ կրօնական բնաւորութիւն է ստանում: Սուննի մահմեդականութեան մէջ այդպէս կոչուած շուրա ազանդները տարբերում են իրարից միայն մի քանի աննշան հայեցքներով մասամբ օրինական, մասամբ ծիսական: Սակայն բոլոր մահմեդականները թէ շիա և թէ սուննի, այն հպարտ ինքնազացումն ունին, որ իրենք մի Ալլահի առաջ նախապատիւ կըրօնական համայնք են կազմում, և չեն ճանաչում ոչ մի բաժանումն պետութեան և եկեղեցւոյ մէջ: Իրօք կրօնը միակ կապը չէ, որ նոցա կապում է այլ կրօնի շնորհիւ նաև ընդհանուր «քաղաքակրթութեանը», ընդհանուր օրէնքը և ընդհանուր կրթութիւնը: Այդ կրթութիւնը, որ այնքան տարբեր է մերից, իւր հիմք ունի արաբերէն դորանը (որ օտար լեզուներով չըպէտք է թարգմանուի) և Մահմեդի բերանացի խօսքերը, աւանդութիւնը, ինչ գիտութեանն է վերաբերում՝ այս օրուայ մահմեդական աշխարհն իւր անունովն առնում է իւր նշանաւոր անցեալից: Թէև նոր մեկնաբանական կամ առհասարակ կրօնական գրքեր նոյնպէս գրուում են, բայց նոր բեղուն գաղափարներ հաղիւ թէ նշմարուին նոցա մէջ: Ընդ մինչև ժ դարերում մահմեդականութիւնը ստիպուած է եղել կռիւ վարել այդպէս կոչուած մոնոթեոզիստական անուղադաւան ազատամիտ հայեացքների դէմ, որոնք մասամբ կապ ունեին յունական փիլիսոփայութիւնից ձեռք բերած ծանօթութեան հետ: Բայց կարողացել է յաղթել նոցա, բաւականաչափ օգուտ քաղելով նաև այդ կռուից իւր սեփական զարգացման համար: Այդ օրուանից նորա ներքին կազմակերպութիւնը պատրաստ էր, և նա մեզ ներկայանում է իբրև մի միապաղաղ ամբողջ, որոշ անցեալի վերայ հաստատուած քաղաքակրթութեան աշխարհ: Ով այսօր ձգտում է այդ աշխարհում կրթութեամբ լինել, պէտք է պարապել դորանի հետ կապ ունեցող գիտութիւններով, որոնց թուում է նաև արաբերէն քերականութիւնը՝ թուրք լինի նա ճապոնացի, թէ մարոկացի՝

* Այս կրկնակի վերնագիրների ներքոյ երկու յօդուած է հրատարակել Christliche Welt-ի 39 և 41-րդ համարներում ձեր անցեալ անգամ յիշած Պրոֆ. Սոցին (Արարատ եր. 404), որ և իբրև հեղինակաւոր գրութիւններ թարգմանօրէն յառաջ ենք բերում այստեղ, ինչ ինչ յապաւումներով:

միևնոյն է: Բոլոր այդ ժողովուրդների մէջ իւրաքանչիւր անհատի կեանքը, ճնունդից ըսկսած գրեթէ մինչև թաղում՝ զորանի միջոցով միօրինակ կարգ ու կանոնի ներքոյ է դրած. օրէնքի մասին ունեցած գաղափարներն ընդհանուր են: Իսկ արեւելցու համար օրէնքի հիմք կազմում է սովորութեան և իշխողի բացարձակ ոյժը: Այսպիսով համիւլամականութիւնն արդիւնք է իսլամին ենթարկուած ժողովրդոց ընդհանուր հայեցողութիւնների:

Մահմեդականների մէջ միութեան գիտակցութիւնը կենդանի պահելու համար կան և առանձին միջոցներ ձեռք առնուած: այդպէս օրինակ իւրաքանչիւրի վերայ տրուած այն կրօնական պարտականութիւնը որով նա զոնէ միանգամ իւր կեանքում ուխտագնացութիւն պէտք է յանձն առնէ, դէպի Մեքկա: Այն տպաւորութիւնը որ իսլամի ծագման հանդիսավայրը թողնում է հաւատացեալների հոգեւոյ վերայ՝ խիստ զօրեղ է. այդ կեդրոնից ուխտագնացները տանում են դէպի աշխարհի ամեն ծայրերն այն ոգեւորիչ զգացումը թէ իսլամը մի միութիւն է կազմում.....:

Այսպիսի շարժումներ, ինչպէս վերջին ժամանակներս Ափրիկայում յառաջ եկած մանդիականութիւնն է ներկայացնում՝ կարող են արդարև սահմանափակ թուով մահմեդականների դրաւել բայց մեծ հեռեանքներ չպէտք է սպասել նոցանից, որովհետև հասարակական կեանքի պայմաններն արեւելքում, մանաւանդ երկրագործ դասի մէջ, անյիշատակ ժամանակներից ի վեր այնպէս անշարժ կերպով հաստատուած են, որ այստեղ կրթութեան և կրօնի մէջ նորութիւններ դիւրաւ մտաք չեն գործում: Ազգաբնակչութեան մեծադոյն մասը երկրագործներն են կազմում, իսկ նոցա խելքում նըստած կան որոշ թուով աւանդական գաղափարներ, որ և նոքա պինդ պահում են. հասկանալի է ըստ ինքեան, որ նոքա կրօնական խնդիրների մէջ ևս չափազանց պահպանողական կլինին: Իսկ երկրագործները կազմում են հարկաւ ազգաբնակչութեան ամենաառողջ մասը: Երբ բեղուն ցեղերը սկսում են նըստակեաց կեանք վարել և երկիր մշակել, դառ

նում են ամենաեռանդուն և խիստ պահպանողներ մահմեդականութեան դրած պարտականութեաների մինչդեռ առաջ կրօնափրութեան շատ քիչ նշաններ էին ցոյց տուել: Հէնց երկրագործների մէջ է ամենից աւելի տարածուած այն գեղեցիկ սովորութիւնը որ արտայայտում է նոցա միմեանց հետ սերտ կերպով կապուած լինելու զգացումը՝ որով իւրաքանչիւր մահմեդական միւսին եղբայր է անուանում և այդպէս էլ վարուում է նորա հետ: Հիւսիսային Ափրիկայում այդ արտայայտութիւնն աւելի խոր նշանակութիւն է ստացել. այդտեղ զանուում են մի շարք ընկերութիւններ «եղբայրութիւն» անունով որոնց գլխաւոր նպատակն է դէմ դնել ամեն մի արտաքին հակամահմեդական ազդեցութեան:

Մի կրօն, որի դաւանարանութիւնն այնպիսի խիստ և անփոփոխելի սահմանների մէջ է ամփոփուած և որ, զոնէ ըստ երեւութին, այնպէս պարզ է, ինչպէս մահմեդականութիւնը՝ բնականաբար անմտոջի պէտք է լինի ամեն տեսակ արտաքին ազդեցութեանց համար: Անուրանալի է նաև, որ իսլամը գիտէ ծարտար կերպով արեւելցու բնաւորութեան, չստեղք իսկական պէտքերին, համապատասխանել, այն յաջող դէպքերում բաւարարութիւն իսկ տալ. նա ստեղծել է մի որոշ անպայման հեղինակութիւն: Այլահը բացարձակ և միակ տէր է, և իրև մի արեւելեան ինքնակալ անում է ինչ որ իւր կամքն է: Մարդիկ նորա սարուկներն են և նոցանից ստրկական հպատակութիւն և երկրպագութիւն է պահանջում: Եւ պարզեւում է ինչ որ կամենայ՝ բարիք կամ չար, բարդ կամ անբարդութիւն, և ում կամենայ, նա բարձրացնում ու ստորացնում է ում կամենում է: Եւ ունի նաև իւր պալատականները, իւր սիրելիները, և վարձատրում է իրեն ծառայողներին: Երբաւի աւատաշնորհութիւն և բարութիւն նոյնպէս Այլահի յատկութիւններից են, բայց զուտ կամայականութեան մօտ երկրորդական տեղ են բռնում: Մարդը պարտուոր է այդ բացարձակ իշխանութեան առաջ խոնարհել և կատարելապէս անձնատուր

լինելու նամանականդ ամեն ինչ շնորհակալութեամբ ընդունել Ալլաշի ձեռքից: Յիրաւի իշխման համար օտար չէ մասնաւորների երկիւղած սրտով Ալլաշին ուղղած ազօրքը: սակայն սովորական աստուածապաշտութեան նիւթը կազմում են առանց հասկանալու արտասանած դորանի հատուածները: որով մահ-մեղահանն արդէն իւր կրօնական պարտքը կատարած և վարձարտութեան արժանի է համարում իրեն:

Այսպէս ուրեմն իսլամի տուած գաղափարն Աստուծոյ մասին ունի նաև իւր լաւ կողմերը: Պարզ միանտուածութիւնը, որի մարգարէն հանդիսացաւ Մահմեդը, այնպէս հասկանալի ու որոշ է, որ պէտք չէ վարմանար թէ ինչպէս մահմեդականութիւնը Ափրիկայի հեթանոսների մէջ յառաջադիմում է, և մինչև իսկ ամբողջ աշխարհը նուաձել է երազում: Բայց միւս կողմից Աստուծոյ այս գաղափարը խիստ զուրկ է դրական բարոյական հիմունքներից: Յայտնի է, որ նոյն իսկ Մահմեդի դործունէութեան սկզբներում սարսափն ու երկիւղը Ալլաշի առաջ մեծ դեր էին կատարում: Այդպէս և մինչև այսօր այն երկիւղը թէ Աստուած պատժում է և վրէժ է առնում իւր իշխանութիւնը շքանաչոյններից, մահմեդականի համար իւր կրօնական պարտականութիւնները կատարելու զլիաւոր դրդիչն է:

...Այն բացարձակ նշանակութիւնը, որ Մահմեդ պահանջում էր սուղ զորանին մասամբ գոնէ միջոց էր ծածկելու իւր մերկութիւնները՝ չհաւատացողների առաջ: Եթէ յետոյ դորանից այն դաւանարանական եղբակացութիւնն են հանել, որ զորանը անձեռագործ է, ի յաւիտանից յայտնեալ մի ճշմարտութիւն՝ առանց հիմունքի չէ ուրեմն: Սակայն նոյն իսկ այդ հանգամանքը, որ Մահմեդին իբրև վերջին մարգարէ և զորանն իբրև Ալլաշի բացարձակ խօսք ընդունել երկրորդ կրօնական պարտաւորութիւն դարձաւ ստիպում է ամենաազատամիտ մահմեդականներին անգամ խոնարհել այդ դաւանանքների իբրև անվիճելի ճշմարտութիւնների առաջ: Այդպիսի հայեցողութիւնն ունի անկարծիք կրթական կողմից իւր առաւելութիւն-

ները: ինչպէս օրինակ նաև պապի անսխալականութեան վարդապետութիւնը, բայց դժուար է ասել, ինչպէս պէտք է գուրս կան մահմեդականներն երբ և իցէ այդ խուլ անցքից: Յամենայն դէպս սուանձին նշանակութիւն չունի ս. Գիւրջ սուտեմասիբելու յորդորել նոցա, որովհետև նոցա մէջ այնքան խոր է այն նախապաշարուժը, թէ աստուածաշունչը կրօնի աւելի ստոր աստիճանն է ներկայացնում: որ նոքա չեն կարող գնահատել սորա այն մասերը, որոնք անսահման կերպով բարձր են զորանից: Մահմեդականը ձեռքն առնելով աստուածաշունչը՝ այնտեղ միայն իւր հայեացքների հաստատութիւնն է գտնում: Այն կրտսական եղանակը, որով Մահմեդ մի անգամ ընդ միշտ մերժել է Զրիստոսի աստուածութիւնը՝ թող չէ տալիս ոչ մի կերպ գնահատել Ծորան: Այստեղ ևս մահմեդականը բնականից, կուրա զգայականից միւս կողմը չէ տեսնում: Ծորա համար հարց է մնում միշտ, ի՞նչ շարիով արդեօք Ծոր կտակարանը նախադուշակել է Մահմեդի գալուստը, որ տեղեւում չին և Ծոր կտակարանները հնացել, ուղղուել կամ նոյն իսկ կեղծուել են զորանի համեմատութեամբ: Մահմեդի տղիտութեան ու ջրի դատողութեան շնորհիւ մի անգամ ընդ միշտ քակուած է ճանապարհը պատմական հակացողութեան, կրօնի վարդացման վերաբերեալ հետազօտութեանց համար:

Եւ Յայտնի է ամենքին, որ Մահմեդ մահից յետոյ լինելիք հատուցման համար ամենայն վճռականութեամբ հաւատ պահանջելով միևնոյն ժամանակ իւր զգայական բնութեան համաձայն դրախտի վայելքներն ու դժոխքի պատիժները ամենաբիրտ եղանակով է նկարագրել: Մի շարք մահմեդական գիտուններ աշխատել են մեկնութեան ցոյց տուած բոլոր հնարներով ամոքել նորա արտայայտութեանց ոգին: Բայց իզուր: Այստեղ ևս իսլամը մեծ չտնով յարմարուել է բազմութեան պահանջներին: ուստի զարմանալի չէ, որ մահմեդականը արտաքին կրօնական պարտականութեանց կատարման համար՝ համապատասխան մեծ վարձարտութեան խօստումն ընդունելով, իսկ զանցառութեան համար մեծ պատժի բու-

պատնայլք՝ բոլոր ուժով կապուած է մնում իւր կրօնի և նորա պատուիրանների հետ: Ծերկայ ժամանակում ի նկատի պէտք է ունենայ առանձնապէս որ անհաւատների դէմ կռուելը զորանի մէջ գովարանուում է իրրե առաջնակարգ վարձի արժանի գործ: Ինչու ուրեմն մահմեդականները քրիստոնեաներին կոտորելով որ նոցա արգելուած չէ՝ ախրնկալեալ ուրախութիւնները վայելելու իրաւունք ձեռք չբերեն: Ծիծէ իսլամը զուրկ չըլինէր իսկական բարոյագիտութիւնից՝ անկարելի կը առնար այն մոլեռանդութիւնը որ նպատակ է դնում իրեն անհաւատներին բռնաջինջ անել: Սակայն կրօնը կամ դաւանաբանութիւնը մեռցրել են մահմեդականի խիղճը: Այն պատուէրների մօտ որ հաւատը կամ նորա հետ կապ ունեցող ծիսակատարութիւնն է դնում, բարոյականութեան պատուէրները բոլորովին երկրորդական տեղ են բռնում: Ով առաջինները կատարում է բարեպաշտ մարդ է և ազատ դժոխքի տանջանքներից: Թէպէտ զորանում շատ անգամ պատուիրուում է բարի գործեր կատարել և հակառակ դէպքում զղջալ ու ապաշխարել բայց միւս կողմից Մահմեդ այնքան յաճախ շեշտում է թէ Ալլահը դարեգութ է և ներող որ բարի խիղճ ունենալը համեմատաբար աւելի անտարբեր բան պէտք է նկատուի: Այդպէս օրինակ խզի միս ուտել ահասարակ գոնէ ամբօխի մեծամասնութեան համար աւելի մեծ պատժի արժանի գործ է անշուշտ քան ընկերին մի վնաս հասցնելը: Պէտք է կրկնել միշտ որ շատ մահմեդականներ աւելի բաւ են կատարում իրենց բարոյական պարտականութիւնները քան նոցա կրօնին նայելով ենթադրել կարելի էր, բայց ստորին կարգի բնաւորութիւնների համար առաջին տեղը բռնող կրօնական պարտականութիւնների կատարումը այնքան մեծ նշանակութիւն է ստանում և այնպիսի ինքնախարութիւն յառաջ բերում որ դժուար է այլ ևս մահմեդականին բարձրագոյն բարոյականութեան պահանջները հասկացնել ինչքան և ծանրանալու լինիս նորա խզի վերայ:

Մի այնպիսի հասարակութեան մէջ, որ մեզանում եղած դասակարգերի մեծ խտրու-

թիւնը չէ ճանաչում, մի կրօն որ համեմատաբար չնչին պահանջներ է դնում անհատի առաջ՝ հեշտութեամբ կարող է հաւատացեալների հաւասարութեան զգացումն յառաջ բերել և այս հանգամանքն է որ մահմեդական կրօնական համայնքի միութիւնը պահպանում է: Դորա հետ միասին իսլամը շնայած իւր շեշտելուն, թէ Ալլահի մօտ ոչ մի էակ իրրե հաւասար պէտք չէ դնել շատ զիջող է եղել դէպի ժողովրդական հաւատալիքներն ու նախապաշարուածները: Պատճառը մասամբ այն է որ Մահմեդ ինքը սկզբից և եթ ազգային հաւատի, այլ և կապաշտութեան (Ֆետիշիզմի) նկատմամբ շատ բաներում տեղի տուաւ: այն նոյն իսկ որոշ տեսակետով իսլամը հին սեմական հեթանոսութեան վերայ միայն արտաքին ծեփն է աւելցրել: Ապա վրայ է գալիս նաև այն հանգամանքը որ նոր կրօնն ստիպմամբ ընդունած ազգերի սեփական հայեացքներն իրենց ազդեցութիւնը գործեցին նորա վերայ: Մինչդեռ Մահմեդ ինչպէս յայտնի է մերժեց իրեն հրաջք գործելու արած առաջարկութիւնը՝ արդէն նորա կեանքի ու գործունեութեան մասին մեր ձեռքը հասած ամենահին տեղեկութիւնները նորան իրրե հրաշագործ են ցոյց տալիս: Անշուշտ օտար ազդեցութեանց հետևանք է այդ: Մահմեդական հաւատի հերոսները պէտք չէր պակաս շնորհներով օժտուած լինէին քան միւս կրօններինը: Սուրբերի պաշտամունքը մահմեդականութեան մէջ շատ շուտ զարգացաւ և ապացուցուած է որ շատ տեղ մանաւանդ հիւսիսային Ափրիկայում, հին հեթանոսական աստուածութիւններ իրրե մահմեդական սուրբեր պաշտուում են: Արևելքում ճանապարհորդողը ամեն քայլափոխում պատահում է օրինակ սուրբ անձնանմանի ծառերի որոնցից հանդերձի կոտորանք են կախուած: այդ մի խիստ հին սնտոխապաշտութիւն է: Այդպէս և Ասորիքի մահմեդական (մասամբ նաև քրիստոնեայ) գիւղացին չէ կարող երբէք համարձակուել սուտ երգուելու այն սուրբի անունով որին նուիրուած մի մատուռ կայ իւր գիւղին մօտիկ բլրերի վերայ՝ վախենալով որ անմիջապէս կը

պատժուի մինչդեռ Աստուծոյ անուշով սուտ երգուելու պատրաստ է: Մահմեդական արևելքի բոլոր երկրներում այժմ ևս այնպիսի ազանդներ կան տարածուած: որոնց կրօնը հեթանոսութեան, քրիստոնէութեան և իսլամի մի տարօրինակ խառնուրդ է ներկայացնում: այդպէս Դրուզները իզմայլիք, Նոսա՝ յիլիք, ինդիանները և յն: Պարսկաստանում պարզաշտականութիւնն ու մանիքեցութիւնն են ծածկուած մնում մահմեդական քօղի տակ և մինչև իսկ բուդդայականութիւնը չընդհատանից իսլամի վերայ ազդեցութիւն է ունեցել: Սակայն հէնց այդ հանգամանքը որ իսլամն այդպէս սերտ կերպով միացել է ժողովրդի հաւատքի հետ՝ տալիս է նորան իւր իրր կրօնի ունեցած զօրութիւնը և ապահովում նորա գոյութիւնը:

Ասածներկցս ըստ բաւականին հետևում է: թէ ինչ հիմանց վերայ իսլամն անմատչելի է քրիստոնէութեան կողմից եկած ազդեցութեանց համար: Նոր հետազօտութեանց շնորհիւ գնալով աւելի և աւելի է պարզուում, որ իսլամը պէտք է հրեութեան վերայ պատուաստած մի խորթ շառաւիղ համարուի: Արդ եթէ մտածենք, թէ ինչպիսի տոկունութեամբ հրէաները որ դարերէ ի վեր համեմատաբար փոքրիկ համայնքներով ապրում են Յւրոպայում՝ գիմադրել են քրիստոնէական ազդեցութեան և ինչպէս դժուար է նոցա համար հրաժարուիլ իրենց սեփական աշխարհայեցողութիւնից և բարբից՝ այլ ևս զարմանալի չի լինի որ մահմեդականութիւնը իւր ամբողջական ամփոփ դրութեամբ շատ աւելի զօրեղ կերպով է հակառակում այդպիսի ազդեցութիւններին: Առանց այն էլ բաժան բաժան եղած քրիստոնէութիւնը նոյնքան աւելի անզօր է նորա դիմաց, որքան եւրոպական պետութեանց քաղաքականութիւնը պահանջում է ամեն պայմանով անփոփոխ պահել իրերի դրութիւնն արևելքում:

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈՒՈՒՅ ԵՍԵՂԵՅԻ:

— Եկեղեցիներն ժողովեան խընդրին նուիրուած մի ամսաթերթ է լոյս տեսնում այժմ Հոռովում: Այդ հրատարակութիւնը կոչում է «ԻԵՍՍԱՐԻՈՆ» այն յոյն ծրանաւորի անուամբ, որ 15-դ դարում մեծ ճիգըն էր թափում արևմտեան եկեղեցու հետ արևելեանը միացնելու և մասնակցեց Ֆերրարայի ու Ֆլորենցիայի եկեղեցական ժողովին: Իր ծրագրի մէջ ամազգրի խմբագրութիւնն յայտնում է, որ կամենում է հետեւել Լևոն ԺԿ. պապի միութեան երկու շրջաբերականներին «Praecarae» (1894 թ. 20 յունիսի) և «Orientalium dignitas» (1894 նոյեմբ. 30), «Բեսսարիոնը պէտք է հետեւի արևելեան եկեղեցու լեզուին և ուղղութեան. մենք պէտք է—ասուած է այդ ծրագրում—մասամբ մոռանանք, որ լատին ենք, և միայն մտածենք, որ նոյն Հօր զաւակներ ենք մեր արևելեան բաժանուած եղբայրների հետ»: «Բեսսարիոնի մի քանի համարներն արգէն իսկ լոյս են տեսել, որոնցից երևում է խմբագրութեան մեծ ջանքը: Ծրագրին համաձայն «Բեսսարիոնը» պիտի լոյս տեսնէր երկու լեզուով՝ իտալերէն և յունարէն, բայց առ այժմ միայն իտալերէն է հրատարակուում և բաւական մեծ թուով համակրողներ ունի:

— ԺԹ. դարի վերջը պիտի յաւերժանայ մի համաշխարհային կաթողիկական ցոյցով: Բողոնիայում այս նպատակով մի յանձնախումբ է կազմուել, որի նախագահն է Վոնս Աբուաղեբնի: Ահա թէ սա ինչ է դրում Պապին. «Մենք կամենում ենք մի միջազգային յանձնաժողով հիմնել և օր առաջ բոլոր աշխարհի կաթողիկոսներին պատրաստել, ժԹ. դարավերջը մի ընդհանուր և հանդիսաւոր գոհաբանութեամբ առ Փրբկիւն մեր Յիսուս Քրիստոս ինչպէս առ նորա փոխանորդն երկրիս վրայ, առ հոռովեական պապն, սիրոյ, հնազանդութեան և հաւատարմութեան յայտարարութեամբ տօնելու»: Հոռովմայ պապն հաւանութիւն է տուել այս մտքերին և յանձնախմբին ուղարկել է աաքբիական օրհնութիւն:

— Հակամաստնեան շարժումը կաթողիկոսների մէջ մեծ յառաջադիմութիւն է գործում. սեպտեմբերի 26-ին Տրիէնտում տեղի ունեցաւ միջազգային մի համաժողով ընդդէմ մասոնների, Այս համաժողովի մէջ կազմուեցան Եւրոպիոյ զանազան ազգերի մէջ գործելու համար ազգային յանձնախմբեր, որոնց կենդրոններն են Հրոռովմը, Տուրինը, Փարիզը, Վեննան, Պեշաբ, Բեռլինը, Լիսսաբոնն և յն: Գերմանական կաթողիկոսների ժողովը Գորտմունդում նոյնպէս յարեցաւ այդ

